ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆ

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Սեփական հեռագիր)

Էջմիածին, 14 հոկտ.

Հայ տաճարի գիւտի և տպագրութեան կուլտուրական-ազգային յօբելեանի տօնակատարութիւնը, որ կատարուեց հոկտեմբերի 12-ին և 13-ին Օշականում և Էջմիածնում, ընդունեց փառաւոր ընոյթ.

Զանազան վայրերից եկած ներկայացուցիչների թիւը հասնում է մօտ 250 հոգու։

Ստացված են բոլոր երկիրներում գտնվող հայերից, նոյն իսկ Հարէշստանից, մօտ 400 հեռագիր, որոնցով շնորհաւորում և իրենց բերրութիւնն են արտայայտում ազգային կուլտուրական մեծ տօնի առիթով.

Շնորհաւորութիւններ են ուղարկել նաև ռուսական, վրացական, յունական, թուրքական, կաթոլիկ և բողոքական այլապէս հիմարկութիւններ.

Յօբելեանի փառաւոր տօնակատարութիւնը սկսվեց հոկտեմբերի 12-ին Օշակնում, ուր, պատարագից յետոյ, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց ս. Մեսրոպի գերեզմանի վրա՝ ներկայութեամբ Վեհափառ Կաթողիկոսի, ամբողջ հոգևորականութեան, ներկայացուցիչների և բազմաթիւ ժողովրդի։

Հոգեհանգստից յետոյ Վեհափառ Կաթողիկոսը օրհնյ պատշաճ քարոզ խօսեց՝ փառաբանելով ս. Մեսրոպի, ս. Սահակի և նրանց մեծ գործը շարունակողների ազգօգուտ գործունէութիւնները.

Խօսվեցին և կարդացվեցին շնորհաւորական ճառեր և ուղերձներ.

Առաջին ճառերը արտասանեցին թիւրքահայերի ներկայացուցիչներ Ստ. Մալխասեանց և Հ. Առաքելեան.

Թուրքերի ներկայացուցչի ճառը ընդունվեց բուռն ծափահարութիւններով.

Հոկտեմբերի 12-ի երեկոյեան Էջմիածնում տեղի ունեցաւ ժողովրդական մեծ տօնակատարութիւն, որ համախմբել էր ժողովրդի հոծ բազմութիւն շրջակայ գիւղերից.

Կարապետ եպիսկոպոսը այդ երեկոյեան կարդաց աւուր պատշաճի դասախօսութիւն.

Հոկտեմբերի 13-ին, կիրակի, Մայր-Տաճարում կատարվեց հանդիսաւոր պատարագ և հայրապետական մաղթանք. Պատարագիչն էր Սուքիաս արքեպիսկոպոսը.

Յերեկոյ ժամը 3-ին Գէորգեան ճեմարանում տեղի ունեցաւ հանդիսաւոր ցերեկոյթ գրական-երաժշտական բաժնով. Ցերեկոյթը սկսվեց ճեմարանի վերատեսուչ Բագրատ եպիսկոպոսի մի գեղեցիկ ճառով. Ներկաների վրա ցերեկոյթը թողեց լաւ տպաւորութիւն.

Երեկոյեան ժամը 6-ին կայացաւ ընդհանուր ճաշկերոյթ մօտ 250 պատգամաւորների մասնակցութեամբ.

Առաջին բաժակը առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսը Թագաւոր Կայսրի կենացը, որ ընդունվեց ոգևորված [illegible]տայով և ռուսական ազգային օրհ[illegible]գի երգեակ նուագածութեամբ.

[illegible]գուի Մարգարեան. Ընկ. ներկայա[illegible]ցիչ Հայկ Տէր-Միքայէլեան ներ[illegible]ների կողմից ինդրեց Կաթողիկոսին առաջարկել Մեծութեան Թագաւոր Կայսրի արկանել հայ ժողովրդի խորին հպատակութեան և անսահման երախտագիտութեան զգացումները.

Երկրորդ բաժակը առաջարկեց Աչ. Քալանթար Վեհափառ Կաթողիկոսի կենացը.

Երրորդ բաժակը առաջարկեց Կաթողիկոսը Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի կենացը, իսկ չորրորդ բաժակը՝ հայ ազգի բարեկեցութեան կենացը.

Հ. Առաքելեան Ամերիկայի, Թիւրքիայի, Պարսկաստանի, Եգիպտոսի և Եւրոպայի հայերի կողմից ողջունեց Ռուսաստանի հայերին.

Ճաշկերոյթից յետոյ, երեկոյեան ժամը 9-ին, բոլոր պատգամաւորները վեհարանում ներկայացան Վեհափառ Կաթողիկոսին, և Հ. Առաքելեան պատգամաւորների կողմից շնորհակալութիւն յայտնեց Նորին ս. Օծութիւնը՝ համազգային ներկայ փառահեղ տօնը Էջմիածնում կազմակերպելու և հիւրասիրութեան համար.

Կաթողիկոսը օրհնեց բոլորին և յայտնեց, որ համաձայն պատգամաւորների ցանկութեան, խորին հպատակութեան հեռագիր է ուղարկել Թագաւոր Կայսրին, նոյնպէս և փոխարքային.

Երեկոյեան ժամը 10-ին կայացաւ Գարեգին վարդապետի հետաքրքրական դասախօսութիւնը.

Այսօր, երկուշաբթի, պատգամաւորները մեկնեցին Էջմիածնից.

Յօգուտ զբաղցական ֆոնդի՝ ի յաւերժացումն համազգային յօբելեանի, ստացված տեղեկութիւնների համաձայն, կը հանգանակվի մօտ կէս միլիոն ռուբլի։

ԼՕԶԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԻՆՔԸ

(Սեփական հեռագիր)

Լօզան, 13 հոկտեմբերի

Լօզանի հայութիւնը տօնելով մեր պատմութեան մէջ գարպլուխ հանդիսացող ոգի դէպքերի յօբելեանը՝ միացնում է իր սրտագին հրճուանքն ու ցնծութիւնը ամբողջ հայութեան զգացմունքներին, միտքամտանի ցանկալի համարում, որ քաղաքակրթութեան այդ երկու մեծագոյն ազդակների տարեդարձը վերածվի ազգային տօնի և հանդիսաւորապէս տօնվի ամեն տարի համայն հայութեան կողմից։

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Շաբաթ, հոկտեմբերի 12-ին, երեկոյեան, Թիֆլիսի ժողովարանի ճեմարանի շինութեան դահլիճում նշանակված էր տօնական երեկոյթ հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի առիթով։

Երեկոյթը պէտք է սկսվէր ժամը 8-ին, ինչպէս ասված էր յայտարարութիւնների ու ծրագրի մէջ.

Բաւականին ստուար բազմութիւն հաւաքված սպասում էր։

Ժամը 9-ից անց եկան նաև Թէոիս առաջնորդ Մեսրոպ ու Աշտ սրբազանները.

Մօտ 9½-ին բացվեց երեկոյթը «Պարգեւատուս» շարականի քառաձայն երգեցողութեամբ։

Դրանից յետոյ սկսվեցին ճառախօսութիւններ։

Առաջինը ամբիոն բարձրացաւ Գ. Իփէկեան։

Ճառախօսը, տալով Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքական պայմանները գիւտի գարաշրջանում, այսինքն. մի կողմից Հայաստանը իրաց մէջ բաժանող՝ ժամանակի երկու հզոր պետութիւնների՝ յոյների ու պարսիկների ջանքերը ձուլելու հայութիւնը, իսկ միւս կողմից՝ դրա շնորհիւ հայ նախարարների մէջն տիրող պառակտումներն ու անենդանութիւնն և եկեղեցու ու թագաւորների մրցումը, ներկայացրեց Վռամշապուհ թագաւորին և Սահակ կաթողիկոսին որպէս խոհուն, խելացի, անցեալի սխալներից խրատված անձեր, որոնք գիտակցելով ազգի ծոմալուտ կորուստը, մտածում են ժողովրդը փրկելու մասին, սկսում են գործել համերաշխ, զգուշանում են յոյներից, հաշտ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի պարսիկները և հետևում են զգուշաւոր քաղաքականութեան։ Ապացուցելով ապա իսկական ժողովրդի գրութիւնը, ճառախօսը նկատեց, որ այդ ժամանակվայ հայ ժողովուրդը չունէր իր ինքնուրոյն կեանքը, գտնվում էր կիսաքաղաքակիրթ դրութեան մէջ՝ ենթակայ աղնուականութեանն ու եկեղեցուն, իսկ քրիստոնէական ոգին դեռ ևս չէր իւրացրել, որովհետև նա մուտք էր գործել վերևից և ինքը տարված էր եղել ընդունելու Ասա քաղաքական այդ արտաքին հանգամանքներն ու երկրի ներքին, ժողովրդի անմխիթար վիճակը զրոյում են ս. Մեսրոպին գրերի գիւտն անելու։ Թէ որքան մեծ է այդ գիւտի նշանակութիւնը՝ այդ երևում է նրանից. որ շնորհիւ այդ տառերի, հայութիւնը